ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1.Անուն Ազգանուն

Լենա Նանուշյան

2. Զբաղեցրած պաշտոնը

ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Սլովենիայի Հանրապետություն, Լյուբլյանա, 2019 թ. հունիսի 11-13-ը

4. Հրավիրող կողմը

Առողջապահության համաշխարհային կազմակերպություն, Սլովենիայի Հանրապետության առողջապահության նախարարություն

5. Գործուղման նպատակը

Մասնակցություն Առողջապահության համաշխարհային կազմակերպության եվրոպական տարածաշրջանում բնակչության առողջության բարելավմանը և բարեկեցությանը հասնելու գործընթացի առաջընթացին նվիրված տարածաշրջանային բարձր մակարդակի համաժողովին

6. Քննարկված թեմաները

Համաժողովի ընթացքում քննարկվել են երկրներում առողջության ցուցանիշների տարբերությունների կրճատման գործընթացը, այդ նպատակին հասնելու նոր ուղղություններն ու հնարավորությունները: Միաժամանակ, մշակվել է առաջիկա 10 տարվա համար առողջության հանդեպ արդարացի վերաբերմունքի ապահովման եվրոպական օրակարգ՝ հաշվի առնելով երեք հիմնական նպատակները. առողջ և բարեկեցիկ պայմանների ստեղծում, այդ ուղղությամբ իրականացվող աշխատանքների ընթացքի արագացում, իրավիճակի վրա ազդեցություն ունենալու հնարավորություն:

7.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Այցի ընթացքում հանդիպել եմ Սլովենիայի Հանրապետության առողջապահության նախարար Ալես Սաբեդերին: Քննարկել ենք երկու երկրների առողջապահության նախարարությունների միջև համագործակցության հեռանկարները և հնարավոր հորիզոնական կապերը՝ առողջապահական կազմակերպությունների միջև: Հանդիպումներ են կայացել նաև գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Պայմանավորվածություններ են ձեռք բերվել առողջության համապարփակ հասանելիության, շրջակա միջավայրով պայմանավորված առողջության բարելավման, սոցիալական դետերմինանտների վերաբերյալ համագործակցության զարգացման ուղղությամբ:

8.Հանդիպման կամ նիստերի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Համաժողովի արդյունքում երկրներն ընդունել են «Առողջապահական ծառայությունների հասանելիության հավասարություն» Լյուբլյանայի հայտարարագիրը:

9.Առաջարկությունները

Առաջարկվել է արագացնել երկրներում առողջության ցուցանիշների տարբերությունների կրճատման գործընթացը՝ հետևելով առաջիկա 10 տարվա համար առողջության հանդեպ արդարացի վերաբերմունքի ապահովման եվրոպական օրակարգին:

10.Ստորագրությունը, ամսաթիվը

X _____

17 հունիսի 2019 թ.